

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՈՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ

Փևորգ Բաղդասարյան

*ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Քրեական դատավարությունը՝ որպես պետական գործունեության առանձնահատուկ տեսակ, հիմնվում է հիմնարար, ղեկավար և ելակետային այնպիսի դրույթների վրա, որոնցում արտահայտվում են դրա հայեցակարգային կողմնորոշումն ու դրանից բխող հիմնական առանձնահատկությունները: Քրեադատավարական սկզբունքները վերաբերում են ամբողջ քրեական վարույթին՝ դրսևորելով որոշակի առանձնահատկություններ վարույթի առանձին փուլերում: Ընդհանուր փուլային պայմանները ևս ընդհանուր բնույթի դրույթներ են, որոնք վերաբերում են վարույթի որոշակի հատվածին և բնութագրում են դրա հիմնական սկզբունքային առանձնահատկությունները: Պարզ ասած՝ ընդհանուր պայմանները կոնկրետ դատավարական փուլի համար ունեն նույն նշանակությունը, ինչ սկզբունքները՝ ամբողջ քրեական դատավարության համար: Այս գաղափարի զարգացումը տեսության մեջ հանգեցրեց «փուլային սկզբունքների» առանձնացման՝ ելնելով այն հանգամանքից, որ ընդհանուր բնույթի մի շարք դրույթներ վերաբերելի են միայն կոնկրետ դատավարական փուլի:

Ս. Ս. Ստրոգովիչը փուլային սկզբունքները բնորոշում է որպես կոնկրետ փուլի առանձնահատկություններով պայմանավորված ղեկավար և որոշիչ դրույթներ, որոնք ունեն սկզբունքային նշանակություն¹: Նույն կարծիքին է նաև Ի.Լ. Պետրուխինը. նա նշում է, որքան էլ որ ընդհանուր քրեադատավարական սկզբունքներն այս կամ այն չափով դրսևորվում են վարույթի բոլոր փուլերում, այդուհանդերձ յուրաքանչյուր փուլ առանձնանում է որոշակի յուրահատկություններով, որոնք արտահայտվում են միայն այդ փուլին բնորոշ սկզբունքներում²:

Համաձայնելով այս մոտեցմանը՝ Ա.Ա. Կայգորոզովը դատական քննության ընդհանուր պայմանները բնորոշում է որպես քրեական դատավարության սկզբունքներ, որոնք իրացվում են դատական քննության փուլում³:

Հեղինակների մյուս խումբը չի ընդունում ընդհանուր պայմանների ինքնուրույնությունն ու փուլային սկզբունքների գաղափարը և փուլային ընդհանուր պայմանները բնորոշում է որպես ընդհանուր բնույթի դրույթներ, որոնք արտահայտում են կոնկրետ փուլ-

¹ Տե՛ս **Строгович М. С.** Курс советского уголовного процесса. М.: Наука, 1968, Т 1, էջ 470:

² Տե՛ս **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. Общая концепция. Неприкосновенность личности. М.: Наука, 196, էջ 16:

³ Տե՛ս **Кайгородов А. А.** Соотношение принципов уголовного процесса и общих условий судебного разбирательства. Вестник Томского государственного университета// 342/2011. էջ 134:

լին բնորոշ դատավարական ինստուտների բովանդակությունն ու նշանակությունը⁴:

Յետաքրքրական է նաև Վ.Դ. Շունդիկովի մոտեցումը, որում ընդհանուր պայմանները բնորոշվում են որպես կանոններ, որոնցում բացահայտվում են ընդհանուր քրեադատավարական սկզբունքների իրացման առանձնահատկությունները կոնկրետ դատավարական փուլում՝ կախված դրա խնդիրներից⁵:

Շրջանցելով քրեադատավարական սկզբունքների և փուլային ընդհանուր պայմանների հարաբերակցության անչափ հետաքրքիր, սակայն սույն ուսումնասիրության առարկա չհանդիսացող տեսական հիմնահարցը՝ փաստենք, որ թեև տարբեր բնորոշումներով, բայց բոլոր դեպքերում միմյանցից առանձնացվող այդ ընդհանուր դրույթները անքակտելիորեն կապված են: Միանշանակ է, որ փուլային ընդհանուր պայմանները չեն կարող հակասել քրեական դատավարության սկզբունքներին և պետք է հանդիսանան կոնկրետ փուլում կամ փուլերում դրանց արտահայտման միջոց: Դատական վարույթների ընդհանուր պայմանները կանոններ են, որոնք, բխելով քրեական դատավարության սկզբունքներից, բնորոշում են վարույթի այդ հատվածի հայեցակարգային առանձնահատկությունները և դրա առավել մանրամասն կարգավորման հիմք են:

Սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում բացահայտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում դատական վարույթների ընդհանուր պայմանների իրավակարգավորման հիմնական առանձնահատկությունները: Այն չի հավակնում վեր հանել յուրաքանչյուր ընդհանուր պայմանի խորքային առանձնահատկություններն ու գիտագործնական հետաքրքրություն ներկայացնող բոլոր հիմնահարցերը, որոնցից յուրաքանչյուրն առավել ծավալուն հետազոտության առարկա կարող է դառնալ:

Ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում առանձին գլուխ է նվիրված դատական քննության փուլի ընդհանուր պայմաններին: Բայց, ի տարբերության գործող օրենսգրքի, նախագծի 8-րդ գլխի «դատական վարույթների ընդհանուր պայմանները» վերտառությունը վկայում է, որ այն ներառում է պայմաններ, որոնք ընդհանուր են դատական վարույթների բոլոր տեսակների համար: Դատական վարույթի առանձին տեսակների, մասնավորապես դատական վերանայման վարույթների համար նախագծում առանձնացված են միայն դրանց բնորոշ ընդհանուր պայմաններ, որոնց գոյությունը չի բացառում դատական վարույթների բոլոր տեսակների համար սահմանված ընդհանուր պայմանների գործողությունը, այլ լրացնում է դրանք դատական վարույթի այդ տեսակի յուրակերպությամբ պայմանավորված և դրանց խնդիրներից բխող կանոններով: Իհարկե ճիշտ չի լինի պնդել նաև, որ դատական վարույթների բոլոր ընդհանուր պայմանները նույն կերպ կարող են գործել դրա բոլոր տեսակների պարագայում, քանզի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները կարող են հանգեցնել այս կամ այն ընդհանուր պայմանի սահմանափակ կամ որևէ այլ կերպ առանձնահատուկ դրսևորման: Այսինքն՝ դատական վարույթների ընդհանուր պայմանների և դրա կոնկրետ տեսակի պայմանների հարաբերակցությունը գրեթե նույնությամբ հանգում է սկզբունքների և ընդհանուր պայմանների հարաբերակցության վերը շոշափված հիմնախնդրին:

⁴ Տե՛ս **Алексеев Н. С., Даев В. Г., Кокорев Л. Д.** Очерк развития советского уголовного процесса. Воронеж: Изд-во Воронеж. ун-та, 1980, էջ 252:

⁵ Տե՛ս **Шундиков В. Д.** Принцип непосредственности при расследовании и рассмотрении уголовных дел. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1974, էջ 120:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի և նախագծի համադրումը ցույց է տալիս, որ վերջինս բնութագրվում է դատական վարույթների ընդհանուր պայմանների առավել համակարգված, միասնական և ամբողջական կարգավորմամբ: Դատական վարույթների ընդհանուր պայմանները նախագծում ներկայացված են հետևյալ խմբավորմամբ՝ ընդդատություն, դատական վարույթի կարգին, դատական վարույթի մասնակիցների վերաբերող պայմաններ և դատական վարույթի այլ պայմաններ:

Ընդդատություն: Ընդդատության դատավարական ինստիտուտը կանոնների ամբողջություն է, որոնք կարգավորում են վարույթների բաշխումը տարբեր դատարանների միջև՝ ըստ դրանց որոշակի հատկանիշների: Հաշվի առնելով ընդդատության ինստիտուտի հանրային կազմակերպական և իրավաապահովող նշանակությունը՝ դրա անթերի կարգավորումը դատական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու և դրա շրջանակներում նարդու իրավունքները երաշխավելու կարևոր երաշխիք է: Ինչպես գործող օրենսգրքում, այնպես էլ նախագծում նախատեսված են ընդդատության առարկայական, տարածքային, այլընտրանքային և գործերի կապվածության հատկանիշները:

Ընդդատության *առարկայական* հատկանիշը գործող քրեական դատավարության օրենսգրքում հստակ առանձնացված չէ, և ընդդատության ինստիտուտի վերաբերյալ ուսումնասիրություններն այդ հատկանիշի գոյությունը չեն ընդունել: Առարկայական հատկանիշն ընկալվել է որպես վարույթի առարկայի առանձնահատկություն, որով պայմանավորված՝ որոշվել է վարույթն իրականացնող դատարանը: Այս հատկանիշի դասական դրսևորումը քրեական ոլորտում մասնագիտացված (զինվորական, հարկային և այլն) դատարանների գոյության դեպքում կոնկրետ ոլորտի քրեական գործերի քննության վերապահումն է նշված դատարաններին: Բայց առարկայական ընդդատությունը ոչ միայն հորիզոնական, այլև ուղղահայաց ուղղություն ունի, այսինքն՝ այդ չափանիշով կարող է սահմանազատվել ոչ միայն նույն ատյանի դատարանների, այլև վերանայող ատյանների իրավասությունը: Նախագծում սահմանված ընդդատության առարկայական հատկանիշը հենց այդպիսի դրսևորում ունի և մասնագիտացված դատարանների բացակայության պայմաններում դրանց միջև գործերի բաշխման կանոններ չի պարունակում: Այն առավելապես կանոնակարգում է իրավասությունների բաշխումը՝ դատական տարբեր ատյանների միջև:

Ընդդատության առարկայական հատկանիշը ենթադրում է, որ առաջին ատյանի կարգով քննվող բոլոր քրեական վարույթներն իրականացվում են առաջին ատյանի դատարանում, վերջինիս դատական ակտերը վերանայվում են միայն վերաքննիչ ատյանում, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտերը՝ վճռաբեկ ատյանում: Առարկայական ընդդատության այս կանոնը նաև ընդդատության բացառիկ հատկանիշի բացառման նշանակություն ունի, քանի որ այն հնարավոր չի համարում վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանի կողմից որևէ գործով առաջին ատյանի կարգով վարույթի իրականացումը, ինչպես նաև դատական ակտի վիճարկումը վճռաբեկ ատյանում՝ վերաքննիչ ատյանի շրջանցմամբ:

Ընդդատության *տարածքային* հատկանիշը սահմանում է դատարանների իրավասությունը՝ ըստ վարույթի առարկա դեպքի կատարման վայրի: Նախագիծը նույնպես սահմանում է, որ յուրաքանչյուր դատարանի ընդդատյա են այն վարույթները, որոնք իրականացվում են այդ դատական տարածքում կատարված հանցագործությունների կապակցությամբ: Նախագիծը, այս կանոնին հավելով, որ ընդդատության տարածքային կոնոնը գործում է անկախ քննչական ենթակայության կանոններից, այնուամենայնիվ

կոնկրետ դեպքում տարածքային ընդդատության որոշումը կախվածության մեջ է դնում քննչական ենթակայության կանոնից՝ սահմանելով, որ ՀՀ տարածքից դուրս կատարված հանցագործությունների վերաբերյալ վարույթները, մեղադրյալի վերջին բնակության վայրը պարզելու անհնարինության դեպքում ընդդատյա են այն դատարանին, որի դատական տարածում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրը: Իհարկե չի կարելի չնկատել, որ այս կանոնը գործում է այն դեպքում, երբ տարածքային ընդդատության հիմնական կանոնը կիրառել հնարավոր չէ այն պատճառով, որ վարույթի առարկա դեպքը տեղի է ունեցել ՀՀ տարածքից, հետևաբար նաև բոլոր դատարանների դատական տարածքներից դուրս:

Ընդդատության՝ *վարույթների կապվածության* հատկանիշն ածանցյալ և լրացուցիչ է տարածքային հատկանիշի նկատմամբ և գործում է այն դեպքում, երբ տարածքային ընդհանուր կանոնի կիրառումը, տարածքային տարբեր հատկանիշներ ունեցող գործերի միացմամբ պայմանավորված, հնարավորություն չի տալիս որոշելու իրավասու դատարանը: Գործող քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը չի սահմանում դատական վարույթում երկու քրեական գործերը միացնելու դեպքում ընդդատությունը որոշելու որևէ կանոն, իսկ մինչդատական վարույթում միացված և երկու տարբեր դատարանների ընդդատյա գործերով ընդդատության որոշումը կախվածության մեջ է դնում քննչական ենթակայությունից: Պահպանելով հարցի այսպիսի կարգավորումը մինչդատական վարույթում միացված վարույթների կապակցությամբ՝ նախագիծը որոշակիացրել է նաև դատական փուլում վարույթների միացման դեպքում ընդդատության որոշման հարցը՝ 269-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով, որ եթե առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի վարույթներ միացվում են, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որը քրեական գործն ավելի վաղ է ընդունել վարույթ:

Ընդդատության *այլընտրանքային* հատկանիշը ևս չի բնութագրվում խիստ ինքնուրույնությամբ: Այս հատկանիշը որպես այդպիսին նախագծում առանձնացված չէ և ներկայացված է տարածքային հատկանիշի կարգավորման համատեքստում՝ որպես դրանից բացառություն: Ընդդատության այլընտրանքային հատկանիշը վերաբերում է դատական երաշխիքների վարույթին: Նախագծի 268-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատական երաշխիքների վարույթներն ընդդատյա են մինչդատական վարույթն իրականացնող նախաքննության մարմնի նստավայրի կամ համապատասխան վարույթային գործողություն կատարելու վայրի դատարանին: Գործող քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն է տալիս այդպիսի միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացման համար միջնորդող մարմնի գտնվելու վայրի դատարանը: Այսինքն՝ ընդդատության այլընտրանքային հատկանիշը ՀՀ քրեական դատավարությունում նորույթ չէ, իսկ դրա բացակայության մասին պնդումների պատճառն այն է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կապակցությամբ դատարանի իրավասությունը ավանդաբար չի քննարկվել ընդդատության ինստիտուտի շրջանակներում, և վերջինս, ինչպես և դատական քննության մյուս ընդհանուր պայմանները, վերագրվել է միայն գործերի ըստ էության քննությանը⁶:

Պատական վարույթի կարգին վերաբերող պայմաններ: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն առավել դետալային կարգավորմամբ է բնութագրվում նաև

⁶ Տե՛ս, օրինակ, **Порцева О. Б.** Подсудность уголовных дел. Автореф дисс. ... канд. юрид наук. Ижевск, 2004:

դատական վարույթի իրականացման ընթացակարգային հարցերի կարգավորման տեսանկյունից:

Նախագիծը սահմանում է, որ դատական վարույթի իրականացման ձևը դատական նիստն է, որը որպես կանոն պետք է իրականացվի դատական նիստերի դահլիճում: Դատական նիստում իրականացվում են դատալսումներ, որոնք դատական վարույթի բովանդակությունն են: Նախագիծը հնարավոր է համարում դատական նիստի անցկացումը դատական նիստերի դահլիճից դուրս այն դեպքում, երբ անհրաժեշտ է այլ վայրում կատարել վարութային գործողություններ:

Դատական նիստերի դահլիճից դուրս դատական նիստ անցկացնելուց պետք է տարբերել արտագնա դատալսումները, որն առանձին կարգավորում է ստացել նախագծում: Եթե գործող օրենսգրքում խոսվում է կոնկրետ դատական նիստն արտագնա անցկացնելու հնարավորության մասին, ապա նախագիծը ենթադրում է դատալսումներն ամբողջությամբ արտագնա՝ զորամասի կամ քրեակատարողական հիմնարկի տարածքում անցկացնելու հնարավորություն այն դեպքում, երբ բոլոր մեղադրյալները զինծառայող են, կամ բոլոր մեղադրյալները պատիժ են կրում ազատազրկման ձևով:

Դատական վարույթի *հրապարակայնությունը* ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում ներկայացված է և՛ որպես սկզբունք, և՛ որպես դատական վարույթի ընդհանուր պայման: Այս հանգամանքը ևս հաստատում է այդ երկու հասկացությունների փոխադարձ անբաժանելի կապն ու դրանց բացարձակ սահմանազատման անհնարինությունը: Նախագծի 28-րդ հոդվածում ամրագրված են դատական վարույթի հրապարակայնության հիմնարար կանոնները, ու ուրվագծված են դրանց գործողության սահմանափակման հնարավոր շրջանակները, իսկ 274-րդ հոդվածն առավելապես կարգավորում է դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման դեպքերը:

Գործող քրեական դատավարության օրենսգրքը հրապարակայնության սկզբունքի սահմանափակումը կապում է վարույթի առարկայի հետ, օրինակ՝ անձնական և ընտանեկան կյանքին կամ անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչը գործնականում սահմանափակ մեկնաբանման պատճառ կարող է դառնալ: Այնինչ նախագիծը դժվակ դատական նիստ անցկացնելու հնարավորություն է նախատեսում՝ անկախ պաշտպանվող շահի և վարույթի առարկայի միջև կապից, այսինքն՝ անկախ այն բանից՝ հանցագործությունը, որի վերաբերյալ իրականացվում է վարույթը, վերաբերու՞մ է անձի ընտանեկան կյանքի, կամ ուղղվա՞ծ է արդյոք անձի սեռական ազատության կամ սեռական անձեռնմխելիության դեմ, թե՞ ոչ: Այսինքն կարգավորումը միանշանակ ընդունելի է, քանի որ պաշտպանվող շահեր, այդ թվում՝ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքին վերաբերող, կարող են առաջանալ ցանկացած, նաև վերը նշված կատեգորիային չպատկանող հանցագործությունների վերաբերյալ վարույթով:

Վարույթի հրապարակայնության պայմանին վերաբերող կարևոր նորամուծություններից մեկն այն է, որ դրանով ի վերջո կանոնակարգված է դատական նիստին ներկա անձանց կողմից տեսագրում, լուսանկարում կամ ձայնագրում կատարելու հնարավորության հարցը: Այսպես, համաձայն նախագծի 274-րդ հոդվածի՝ դատական նիստին ներկա անձինք իրավունք ունեն կատարելու գրառում, իսկ դրնբաց դատական նիստին ներկա անձինք՝ նաև ձայնագրառում: Դատական նիստի ընթացքի տեսագրումը կամ լուսանկարահանումը թույլատրում է դատարանը՝ մեղադրյալի համաձայնությամբ: Մեղադրյալի համաձայնության դեպքում՝ դատական նիստի ընթացքի տեսագրումը կամ

լուսանկարումը կարող է արգելվել դատարանի որոշմամբ՝ կողմերի կարծիքը լսելուց հետո:

Այսինքն՝ դատական նիստին ներկա անձինք գրառում, իսկ դռնբաց դատական նիստի դեպքում ձայնագրառում կարող են կատարել առանց այդ կապակցությամբ առանձին թույլտվության: Դատական նիստի ընթացքը պատկերող միջոցները՝ տեսագրումը և լուսանկարահանումը, կարող են կիրառվել միայն դատարանի թույլտվությամբ: Դատարանը այս հարցի վերաբերյալ որոշումն ընդունում է՝ հաշվի առնելով կողմերի կարծիքը, բայց ամբաստանյալի անհամաձայնությունը միանշանակ բացառում է դրանց կիրառումը:

Նախագիծը նախատեսել է նաև դատական վարույթի կարգին վերաբերող նոր պայմաններ՝ *բանավորությունն ու անմիջականությունը*: Համաձայն նախագծի 275-րդ հոդվածի՝ դատական նիստի ընթացքում դատարանի և դատական վարույթի մասնակիցների միջև բոլոր շփումները, այդ թվում՝ նրանց ելույթները, միջնորդությունները և հայտարարությունները կատարվում են բանավոր: Բոլոր ապացույցները և վարույթի այլ նյութերը դատական նիստում ենթակա են անմիջական հետազոտման դատարանի և դատական վարույթի մասնակիցների կողմից: Դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն դատական նիստում հետազոտված ապացույցները:

Ն. Ա. Դուդկոն անմիջականության պայմանի կարևորության կապակցությամբ նշում է, որ այն ապացույցների հետազոտման մեթոդ է և որպես այդպիսին ձևավորում է դատական քննության ընդհանուր պայմանները միավորող օղակ: Ընդհանուր բոլոր պայմանները ուղղված են ապացույցների անմիջական հետազոտման ապահովմանը⁷:

Նախագծում ավելի հստակ կարգավորում է ստացել նաև դատական կազմի *անփոփոխելիության* պայմանը: Մասնավորապես, համաձայն նախագծի 276-րդ հոդվածի՝ դատարանում վարույթը պետք է իրականացվի դատարանի նույն կազմով, իսկ վարույթին դատավորի մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է տվյալ դատարանի այլ դատավորով: Դատավորի փոխարինումից հետո դատական վարույթը սկսվում է նորից: Այսինքն՝ գործող օրենսգրքում օգտագործվող «վերսկսվում է» եզրույթի փոխարեն, որը գործնականում բազմիցս տարակերպ մեկնաբանման տեղիք է տվել, նախագիծը հստակեցնում է դատավորի փոխարինման դեպքում վարույթն սկզբից սկսելու կանոնը, որից բացառություն է միայն այն դեպքը, երբ դատավորին փոխարինում է պահեստային դատավորը:

Դատական վարույթի մասնակիցներին վերաբերող պայմաններ: Դատական վարույթի ընդհանուր պայմանների այս խմբի հիմնական բնութագրական առանձնահատկությունն այն է, որ նախագիծն ամրագրել է դատական նիստին վարույթի բոլոր մասնակիցների մասնակցության պարտադիրության հիմնական կանոնը՝ դրանից կոնկրետ բացառություններով: Նախագիծը պարտադիր է համարում նաև տուժողի, զույքային պատասխանողի, նրանց ներկայացուցիչների, մեղադրյալի օրինական ներկայացուցչի մասնակցությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը համապատասխան անձին նախապես թույլատրել է չմասնակցել տվյալ դատական նիստին, դատարանը, լսելով կողմերի կարծիքը, գտնում է, որ համապատասխան անձի բացակայությունը խոչընդոտ չէ տվյալ դատական նիստն անցկացնելու համար, կամ հրապարակվում է վերդիկտը

⁷ Տե՛ս **Дудко Н. А.** Общие условия Общественного разбирательства в системе гарантий социалистического правосудия. Автореф. дисс. ... канд.юрид.наук., Москва, 1985, էջ 16:

կան դատավճիռը: Ընդ որում, վերդիկտի կան դատավճիռի հրապարակման դատական նիստին վարույթի որևէ մասնակցի մասնակցություն պարտադիր չէ, բացառությամբ անազատության մեջ գտնվող ամբաստանյալի մասնակցության:

Դատական վարույթների այլ պայմաններ: Դատական վարույթների ընդհանուր պայմանների այս խմբից հարկ ենք համարում անդրադառնալ դատական վարույթի սահմանների և մեղադրանքի փոփոխման հիմնահարցերին՝ հաշվի առնելով նախագծում այդ ինստիտուտների էական վերափոխման հանգամանքը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում:

Ինչպես տեսնում ենք, գործող քրեական դատավարության օրենսգիրքը բացառում է դատարանի կողմից մեղադրանքը խստացման առումով փոփոխելու հնարավորությունը դրա և՛ փաստական, և՛ իրավական կողմից: Ավելի պարզ՝ դատարանը չի կարող հաստատված համարել այնպիսի հանգամանքներ, որոնք, ի տարբերություն անձին առաջադրված մեղադրանքում ներառված փաստերի նկարագրության, կվատթարացնեն անձի վիճակը, և չի կարող առաջադրված մեղադրանքում ներառված իրավական գնահատականի համեմատությամբ ավելի խիստ գնահատական տալ նկարագրված արարքին: Այսինքն՝ անձին առաջադրված մեղադրանքը որոշում է դատական քննության սահմաններն իր երկու՝ փաստական և իրավական տարրերի միասնությամբ:

Նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում այս մոտեցումը փոխվել է: Այսպես, նախագծի 283-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ: Դատարանը բոլոր դեպքերում սահմանափակված է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով: Դատարանը սահմանափակված է մեղսագրվող փաստական հանգամանքներին (արարքին) տրված իրավական գնահատականով միայն այն դեպքում, երբ տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար չի դարձրել քննարկման առարկա: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերդիկտ կայացնելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է սույն օրենսգրքով սահմանված պայմանների պահպանմամբ դրանց տալ իրավական այլ գնահատական, ինչպես նաև մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալին վերագրվող առանձին արարքներ:

Փաստորեն, նախագիծը ևս, արտահայտելով մեղադրանքի կառուցվածքում փաստի և իրավունքի միասնականության գաղափարը, այնուամենայնիվ տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատական քննության սահմանները որոշելու հարցում դրանց նշանակության կապակցությամբ: Դատական վարույթի սահմանները որոշում է մեղադրանքի փաստական կողմը: Դատարանը բացարձակ կաշկանդված է փաստերի այն նկարագրությամբ, որը ներառվել է նրան ներկայացված մեղադրանքում: Դատարանի կողմից փաստերի փոխոխությունը կարող է արտահայտվել միայն մեղադրանքի ծավալից մեղադրյալին վերագրվող առանձին արարքներ հանելով: Մյուս կողմից, դատարանը

կաշկանդված չէ նկարագրված փաստերին տրված իրավական գնահատականով և կարող է փոփոխել այն ընդհուպ խստացման առումով, եթե այդ հարցը քննարկման առարկա է դարձրել պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում: Վերջինս ենթադրում է արարքի հավանական փոփոխվող գնահատականի քննարկում այնպիսի պայմաններում, երբ վարույթի կողմերն օժտված են այդ կապակցությամբ իրենց դիրքորոշումները ներկայացնելու և հիմնավորելու հավասար հնարավորություններով:

Նախագծում նախատեսվող այս փոփոխությունը թերևս ամենահեղափոխականն է դատական վարույթների ընդհանուր պայմանների շրջանակներում, հետևաբար այն բազմաթիվ քննարկումների առարկա է դարձել: Այս փոփոխության ընդդիմախոսների մոտեցման հիմքը մեղադրանք հասկացության կատարյալ միասնականության գաղափարն է, որը ենթադրում է, որ թե՛ իրավական և թե՛ փաստական կողմի փոփոխությունը ենթադրում է մեղադրանքի փոփոխություն, իսկ մեղադրանքը խստացման առումով փոփոխելը բնորոշ է մեղադրանքի կողմին և հետևաբար հարիր չէ դատարանի կարգավիճակին: Այս համատեքստում բնականաբար բարձրացվել է նաև նման կարգավորման մրցակցության սկզբունքի հետ անհամապատասխանության հարցը: Բայցևայնպես, նախագծում տրված լուծումը ժամանակի ընթացքում առաջացած գործնական խնդիրների հրամայական է, որոնք ոչ պակաս հիմնավոր են կասկածի տակ դնում դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի բարձր դերը: Խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ դատարանը համաձայն չէ փաստերին տրված իրավաբանական որակմանը, բայց դատախազը չի փոխում այն (օրինակ՝ ոչ հազվադեպ հանդիպող գողություն-կողոպուտ կամ կողոպուտ-խարդախություն որակման խնդիրները): Այս դեպքում դատարանը կանգնում է երկու անընդունելի լուծումների երկընտրանքի առաջ՝ արդարացնել ամբաստանյալին՝ փաստերի կոնկրետ նկարագրությամբ և իրավական կոնկրետ գնահատականով առաջադրված մեղադրանքում նրա մեղքը հաստատված չլինելու պատճառով, կամ կայացնել մեղադրական դատավճիռ՝ հակառակ իր դիրքորոշման: Չմանրամասնելով յուրաքանչյուրի՝ ակնհայտ անընդունելի հետևանքները՝ փաստենք, որ դրանցից որևէ մեկը պակաս անհամապատասխան չէ դատարանի դերի ընդհանուր հանրային կամ զուտ գիտական ընկալմանը: Իսկ նախատեսվող փոփոխությունը կոչված է լուծելու հենց այդ խնդիրը՝ արդարադատություն իրականացնող դատարանին իրավունքի կիրառման հարցում ինքնուրույնությամբ օժտելու միջոցով: Եվ այստեղ միանգամայն բնական հռետորական հարց կարող է առաջանալ. իսկ ինչո՞ւ գործի լուծման բեռն իր վրա կրող մարմինը չպետք է իրավունքի կիրառման ազատություն ունենա և հակառակը՝ կաշկանդված պետք է լինի վարույթի կողմի իրավակիրառմամբ, որը նույն մրցակցության տրամաբանությամբ պետք է ունենա բացառապես նախնական նշանակություն: Կարծում ենք՝ նախագծում առաջադրված լուծումը տեղին է, և դրա օրինաչափության ընկալումն ընդամենը ժամանակի խնդիր է⁸:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսվում է վերափոխել նաև մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոխելու դատավարական ինստիտուտը: Համաձայն նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքների մասով առաջին ատյանի դատարանում կարող է փոփոխվել կամ լրացվել միայն հանրային մեղադրողի կողմից, եթե

⁸ Տե՛ս նաև՝ **Головко Л. В.** Институты отказа прокурора от обвинения и изменения обвинения в суде: Постсоветские перспективы в условиях теоретических заблуждений. // Государство и право, 2/ 2012, էջ 50-67:

հիմնական դատախոսների ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդեռ ատակական վարույթում, և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ մինչև եզրափակիչ դատական ակտ կայացնելու համար առաջին ատյանի դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողն իրավասու է փոխել մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը:

Ինչպես տեսնում ենք, մեղադրանքի տարրերի որոշակի տարբերակումն առկա է նաև մեղադրանքը փոխելու ինստիտուտի պարագայում: Օրենսդիրը հստակ ու առանձին սահմանել է մեղադրանքի երկու տարբեր տարրերը փոխելու մեղադրողի հնարավորությունը: Մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը կարող է տեղի ունենալ միայն նախկինում անհայտ հանգամանքներ ի հայտ գալու դեպքում: Այս դեպքում հանրային մեղադրողը մինչև եզրափակիչ ելույթները սկսվելը միջնորդում է դատարանին ժամանակ տրամադրել՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար: Հանրային մեղադրողի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը հետաձգում է դատական նիստը՝ ողջամիտ ժամկետ տրամադրելով մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար: Մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքում հանրային մեղադրողը կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը տրվում է դատարանին և դատական վարույթի մասնակիցներին:

Մեղադրողի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու համար նախագիծը չի նախատեսում որևէ պայման⁹ և չի սահմանում դատական նիստը հետաձգելու կարգ՝ այդպիսով առաջին հայացքից տարբերակելով մեղադրանքի փաստական և իրավական կողմը փոխելու տարբեր ռեժիմներ: Սակայն կարծում ենք, որ մեղադրանքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում, անկախ փոփոխվող տարրից, նոր մեղադրանք առաջադրելու որոշում կայացնելը, հետևաբար՝ նաև դատական նիստը հետաձգելն օրինաչափություն է, ուստի անհնար ենք համարում մեղադրողի կողմից նաև արարքի իրավական գնահատականը փոխելու հնարավորությունը՝ առանց դատական նիստը հետաձգելու:

Փաստորեն, նախագիծը, ի տարբերություն գործող քրեադատավարական օրենքի¹⁰, հրաժարվել է քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոփոխելու ռեժիմից և բացառել է այն փոխելու հնարավորությունն այն դեպքում, երբ փոփոխման հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի էին կամ կարող էին հայտնի լինել մինչդեռ ատակական վարույթում: Եթե գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատական նիստի հետաձգումը իրապես մեղադրանքի փոփոխման ռեժիմը բնութագրող հանգամանք է, ապա այժմ այն դիտվում է զուտ մեղադրանքը փոփոխելու որոշում կայացնելու տեխնիկական պայման:

Նախագծում սահմանված՝ մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի կատարելագործումն այլոց թվում ընդունելի է նաև այն տեսանկյունից, որ դրանում բացառվում է լրա-

⁹ Այնպիսի պայման, ինչպիսին նախատեսված է փաստական հանգամանքները փոխելու դեպքի համար, այն է՝ նոր հանգամանքներ ի հայտ գալը, իրավական գնահատականը փոխելու համար բնականաբար չի էլ կարող նախատեսվել, քանի որ դրանց ի հայտ գալու պատճառով փոփոխությունը չի կարող չվերաբերել փաստերին:

¹⁰ Տես՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ ՀՅԲԴ2/0144/01/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թ. սեպտեմբերի 9-ի որոշման 19-րդ կետը:

ցուցիչ նախաքննության ինստիտուտի քողարկված կիրառությունը:

Նախագիծը հայեցակարգային փոփոխություն է ենթադրում նաև դատական քննության ընթացքում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի կապակցությամբ, որը կարելի է բնորոշել նաև որպես այդ ինստիտուտից հրաժարում: Համաձայն նախագծի 284-րդ հոդվածի 6-րդ մասի՝ եթե հիմնական դատալսումների ընթացքում բոլոր ապացույցների հետազոտումից հետո հանրային մեղադրողը հանգում է այն համոզման, որ մեղադրյալին ներկայացված մեղադրանքն ամբողջությամբ կամ որոշակի մասով չի ապացուցվել, ապա եզրափակիչ ելույթում միջնորդում է դատարանին համապատասխանաբար ամբողջությամբ կամ որոշակի մասով արդարացնել մեղադրյալին: Նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ հաշվի առնելով մեղադրյալին արդարացնելու վերաբերյալ հանրային մեղադրողի միջնորդության հիմքը, հիմնավորումները և ծավալը, ինչպես նաև լսելով դրա վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցների կարծիքը՝ դատարանն իրավասու է եզրափակիչ դատական ակտում բավարարել կամ մերժել միջնորդությունը:

Մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարումը դատարանում մեղադրանք պաշտպանող սուբյեկտի կողմից այդ գործառույթի իրականացումից հրաժարումն է, որը հետխորհրդային քրեական վարույթի հայեցակարգում դիտվում էր որպես վարույթը բացառող հանգամանք՝ «չկա մեղադրանք, հետևաբար չկա դրանից պաշտպանություն, ուստի նաև՝ քրեական վեճ և դրա լուծման անհրաժեշտություն» պատճառաբանությամբ, որն իհարկե համապատասխանում է քրեական դատավարության մրցակցային կառուցակարգին: Նախագծով մեղադրողը զրկված է դատարանում մեղադրանքի նկատմամբ իր վերաբերմունքը փոխելու դեպքում այն տնօրինելու հնարավորությունից: Մեղադրանքը դատարան տեղափոխելուց հետո դատախազը դադարում է դրա հիմնավոր չլինելու գնահատականը տալու բացարձակ հնարավորությունից: Մեղադրանքի կապակցությամբ որոշում կայացնելու բացարձակ իրավասությունը պատկանում է քրեական վեճը լուծող սուբյեկտին, իսկ մեղադրողը պահպանում է միայն մեղադրանքի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու դատավարական հավասար հնարավորությունը:

Նախագծով նախատեսված կարգավորումը մրցակցությանը հակադիր ի պաշտոն (ex officio) քննության սկզբունքի դրսևորում է, որը պարտադրված է տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հրամայականով և պատճառաբանվում է նաև մեղադրանքից հրաժարման դատավարական ինստիտուտի՝ քրեական դատավարության մայրցամաքային հայեցակարգի հետ անհամապատասխանությամբ¹¹:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ դատական վարույթների ընդհանուր պայմանները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում ենթարկվել են էական, երբեմն հայեցակարգային փոփոխությունների, որոնք պայմանավորված են ներկա իրավակարգավորման պայմաններում առաջացող բազմաթիվ գործնական խնդիրներով և կոչված են բացառելու դրանք: Նշված փոփոխությունները, չլինելով դրվագային, համապատասխանում են ամբողջապես վերափոխված քրեական դատավարության տրամաբանությանը, ինչը կատարելագործված դատավարական ինստիտուտների անշեղ գործողության կարևոր նախապայմաններից մեկն է:

¹¹ Տե՛ս նաև **Головко Л. В.** Институты отказа прокурора от обвинения и изменения обвинения в суде: Постсоветские перспективы в условиях теоретических заблуждений. // Государство и право, 2/ 2012, էջ 50-67:

GENERAL CONDITIONS OF THE TRIAL BY THE NEW DRAFT CODE OF CRIMINAL PROCEDURE

Gevorg Baghdasaryan

Vise Head of Department at the Generals Prosecutors Office

Chair of criminal procedure and criminalistics

Associated professor

This article is dedicated to general conditions of the trial. It is not aimed at revealing the main peculiarities of every condition, but to define their general features. The article mostly concentrates on the regulations cardinally changed by the new draft and reveals the features of new regulations by means of comparative analysis. Finally, the author concludes that the amendments proposed by the draft are of a conceptual nature, correspond to the logics of the entirely modified criminal procedure and aimed at solving practical problems.

ХАРАКТЕРИСТИКА ОБЩИХ УСЛОВИЙ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА СОГЛАСНО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

Геворк Багдасарян

Зам. начальника управления при Генеральной прокуратуре,

Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,

кандидат юридических наук

Данная статья посвящена общим условиям судебного разбирательства. Целью статьи является определение общей характеристики общих условий судебного разбирательства, предусмотренных в законопроекте нового уголовно-процессуального кодекса Республики Армения. В нем особое внимание уделено существенно и концептуально измененным процессуальным институтам, особенности которых раскрываются в сравнении с их нынешним правовым регулированием. В ходе детального изучения этих институтов, автор пришел к выводу, что планируемые изменения концептуальны и взаимосвязаны, и направлены на решение многочисленных проблем, существующих в практике.

Բանալի բառեր – ընդդատություն, անմիջականություն, դատական քննության սահմաններ, մեղադրանքի հրաժարում, դատարանում մեղադրանքի փոփոխություն

Keywords: jurisdiction, directness, boundaries of the trial, to drop the charge, to change the charge

Ключевые слова: подсудность, непосредственность, пределы судебного разбирательства, отказ от обвинения, изменение обвинения в суде